ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 5285-Ա « 26 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 1779–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով՝

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի մայիսի 12-ի «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 1779-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան, «էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան», «Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն», «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն», «Երևան» փողային նվագախումբ», «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվների NN 1-20 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-20 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի ու սույն որոշման 1-ին կետով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ